# ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
# ՈՐՈՇՈՒՄ N 170

ք. Երևան 10.04.2025թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-2/1» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Կրեստոր» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 01358206; գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա Անդրանիկի փ 49ն) (այսուհետ՝ նաև Մասնակից): Հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Կրեստոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-2/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող դիմում-հայտարարությունը՝ հավելված 1-ը և առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը՝ հավելված 1.1-ը, ինչպես նաև ներկայացված փաստաթուղթը՝ հավելված 2-ը, էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված չէ: Քանի որ «Կրեստոր» ՍՊԸ-ն չէր ներկայացրել հրավերով պահանջվող դիմում-հայտարարությունը՝ հավելված 1-ը, ուստի գնահատող հանձնաժողովը չէր կարող հասկանալ արդյոք «Կրեստոր» ՍՊԸ-ն հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ, թե ոչ:

Գնահատող հանձնաժողովն առաջարկել է Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Սակայն «Կրեստոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկման մեջ առկա էր անհամապատասխանություն, մասնավորապես՝

«Կրեստոր» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել էր շտկումները՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-2/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող դիմում-հայտարարությունը՝ հավելված 1-ը և առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը՝ հավելված 1.1-ը, ինչպես նաև բոլոր ներկայացված փաստաթղթերը հաստատված էին էլեկտրոնային թվային ստորագրությամբ, սակայն Հավելված 1-ում՝ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության մեջ, ներկայացված չէր սույն ընթացակարգի հրավերով պահանջվող իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը:

Հաշվի առնելով վերոգրյալը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-2/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով սույն ընթացակարգի հրավերի 8.10-րդ և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետերը, որոշեց մերժել «Կրեստոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բոլոր չափաբաժինների մասով:

Հաշվի առնելով, որ «Կրեստոր» ՍՊԸ-ն խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-2/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Կրեստոր» ՍՊԸ-ին գնման գործընթացին՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-2/1» ծածկագրով գնման ընթացակարգին, հետագա մասնակցության դադարեցմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության պահանջները, որոշում եմ՝ «Կրեստոր» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ